Գանձապետական պահառուի **առցանց համակարգի ուղեցույց**

MINISTRY OF FINANCE
OF THE REPUBLIC OF ARMENIA
TREASURY

AMX

Ներդրողը Գաձապետական պահառու կայքում գրանցվելու նպատակով պետք է մուտք գործի համակարգ՝ սեղմելով <<Գրանցվել>> կոճակը: Կայքում վերջնական գրանցվելու և ակտիվ հաշիվ ունենալու համար, որպեսզի ներդրողը կարողանա գործարքներ իրականացնել, անհրաժեշտ է ՀՀ առևտրային բանկերից որևիցե մեկում ունենալ ՀՀ դրամով հաշիվ: Հաշիվ չունենալու դեպքում սեղմելով Հղմանը, Ներդրողը կարող է ծանոթանալ համագործակցող բանկերի ցանկին, որոնց միջոցով կարող է առցաց հաշվի բացման դիմում լրացնել:



Գրանցվելուց հետո էկրանին բացվում է հաջորդ պատուհանը և Ձեր կողմից լրացված էլեկտրոնային հասցեին ուղարկվում է ժամանակավոր գաղտնաբառ:



Քանի որ գաղտնաբառը մեկանգամյա է՝ երկրորդ անգամ ներդրողը այն չի կարող օգտագործել. անհրաժեշտ է փոխել այն համակարգ մուտք գործելուց հետո: Նոր գաղտնաբառով մուտք գործելիս ներդրողի կարգավիճակը կլինի <<Պասիվ>>: Եթե ներդրողը ցանկանում է ձեռք բերել պարտատոմսեր, անհրաժեշտ է շարունակել գրանցումը՝ սեղմելով աջ հատվածում անուն ազգանվան կողքը գտնվող «Շարունակել գրանցումը» կոճակին, որի արդյունքում կձևավորվի հաստատման ենթակա գրանցման հայտ: Հայտը հաստատելուց հետո Ներդրողի հաշվի կարգավիճակը կդառնա «Ակտիվ» և հնարավոր կլինի գործարքնել իրականացնել:

Քայլ 1

Բացված պատուհանում անհրաժեշտ է լրացնել քայլերը՝ չխախտելով հերթականությունը:
Համակարգը, քաղաքացիությունը ընտրելուց, ՀՀ քաղաքացիություն ունեցող ներդրողներին առաջարկում է գրանցման հետևյալ երկու տարբերակները.

1.ՀՀ նույնականացման քարտի միջոցով,
2.Առցանց գրանցման միջոցով:
Օտարերկրյա ներդրողները հնարավորություն ունեն գրանցվել համակարգ միայն առցանց գրանցման տարբերակի միջոցով:



1.ՀՀ նույնականացման քարտի միջոցով գրանցման տարբերակը.



Ընտրելով ՀՀ նույնականացման քարտով տարբերակը, կտեղափոխվեք Ես Եմ հարթակ, որտեղ հնարավորություն ունեք ընտրելու տարբերակներից մեկը

- Բջջային հեռախոսում ունենալով Մոբայլ ԱյԴի (Mobile ID) հնարավոր է անվտանգ մուտք գործել համակարգ, անցնել նույնականացում (ինդենտիֆիկացիա):
- Նույնականացման քարտով գրանցվելու դեպքում՝ անհրաժեշտ է քարտ կարդացող սարքը և ակտիվացված նույնականացման քարտը միացնել համակարգչին և համարգում սեղմել «Գրանցում ID քարտով» կոճակը: Քարտի ակտիվացման համար անհրաժեշտ է www.ekeng.am կայքից ներբեռնել և համակարգչում տեղադրել Crypto Card Suit Manager ծրագիրը և օգտվել կայքում առկա ձեռնարկից (https://www.ekeng.am/file_manager/Userguide.pdf):

1. Առցանց գրանցման տարբերակ.

Առցանց գրանցման միջոցով գրանցվելու նպատակով անհրաժեշտ է անցնել Հաջորդ էջ:Ներդնողը հնարավորություն ունի ընտրելու մեկից ավել քաղաքացիություն, սակայն եթե ընտրված է նաև ՀՀ քաղաքացիությունը, ապա հաջորդ քայլերում պետք է լրացվեն ՀՀ քաղաքու պարտադիր տվյալներ:





Քայլ 2
Ենթակա են լրացման Անձնական տվյալները

Եթե ներդրողը ցանկանում է նախորդ էջում լրացված տեղեկատվությունը խմբագրել, ապա անհրաժեշտ է սեղմել Նախորդ կոճակը : Սեղմելով Հաջորդ կոճակը՝ համակարգը ստուգում է պարտադիր դաշտերի լրացված լինելը, ինչպես նաև տեխնիկական պահանջներին համապատասխանելիությունը, եթե առկա է անհամապատասխանություն, ապա համակարգը սխալի հաղորդագրության տեսքով կտեղեկացնի այդ մասին, իսկ եթե մուտքագրված տվյալները համապատասխանում են պահանջին, ապա, ներդրողը տեղափոխվում է հաջորդ էջ՝պահպանելով լրացված տվյալները:



Քայլ 3

Բանկային տվյալներ



Քայլ 4

Նույնականացման նպատակով անհրաժեշտ պարտադիր լրացման տեղեկատվություն:

Ներդրողը պարտավոր է ընտրել տեսազանգի համար նախատեսված օր և ժամ, որից հետո ադմինիստրատորը անհրաժեշտության դեպքում կապ կհաստատի:



Քայլ 5.

V-POS համակարգի պատուհանում լրացվում են ներդրողի վճարային քարտի տվյալները: Ներդրողի կողմից կատարվում է վճարում 500 դրամ կամ դրան համարժեք արտարժույթ: Դա միանվագ, անմիջապես վերադարձվող վճար է, որը պարտադիր է նույնականացման համար:

Ձեր կողմից ձևավորված հայտը կարող եք տեսնել Գանձապետական պահառու կայքի՝ Անձնական տվյալներ դաշտի Հայտեր բաժնում: Ձևավորված հայտերը հնարավորություն ունեք դիտելու և խմբագրելու (Խմբագրելու իրավունք ունեն միայն ադմինիստրատորի կողմից վերադարձված հայտերը: Եթե հայտի կարգավիճակը ուղարկված է, ապա ներդրողը կարող է միայն դիտել իր կողմից լրացված և ուղարկված տվյալները):



Հայտը հաստատվելուց հետո արդեն հաշվի կարգավիճակը փոխվում է <<Ակտիվ>> կարգավիճակի և ներդրողը հնարավորություն է ունենում ձեռք բերել գանձապետական պարտատոմսեր: Էկրանին արտացոլվում են տվյալ պահի դրությամբ վաճառքի ենթակա պարտատոմսերի ցանկը: Գնման գինը հաշվարկելու համար անհրաժեշտ է ընտրել վաճառքի ենթակա պարտատոմսերից որևէ մեկը և սեղմել «Հաշվել/ ԳՆԵԼ» կոճակը:

Բացված պատուհանի «Գնման արժեք» դաշտում ներմուծվում է ներդրման ենթադրյալ գումարը: Հաշվել կոճակը սեղմելուց հետո համակարգը հաշվարկում է պարտատոմսի գնման գինը տվյալ պահի դրությամբ և վճարումների ժամանակացույցը (արժեկտրոնի վճարում և մայր գումարի մարում):

Նախընտրած պարտատոմսը ձեռքբերելու համար անհրաժեշտ է սեղմել <<Գնել >>կոճակը, որից հետո համակարգը բացում է Պետական վճարումների էլեկտրոնային համակարգի պատուհանը: Բացված e-payment համակարգում լրացվում են ներդրողի վճարային քարտի տվյալները: Վճարումը հաստատելուց հետո ներդրողի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվում է վճարումը կատարելու վերաբերյալ հաստատում:



Գանձապետական պահառուն ներդրողների սպասարկումն իրականացնում է առանց միջնորդավճարի, սակայն, առցանց եղանակով պարտատոմսեր ձեռք բերելու դեպքում վճարային համակարգի կողմից գանձվում է միջնորդավճար՝ ներդրողի բանկային հաշվից գումարները թողարկողի հաշվին փոխանցելու համար (գործարքի գումարի 0.15%-ի չափով, բայց ոչ ավել, քան 400 ՀՀ դրամ):

Պարտատոմսեր

Վաճառք | Հետգնում | Շրջանառության մեջ գտնվող խնայողական պարտատոմսեր

Տեղեկատվություն պետական գանձապետական պարտատոմսերի հետգնման վերաբերյալ:

Առցանց եղանակով հաշվետվությունների ձևավորում
Ընտրելով պարբերականությունը՝ Համակարգը հնարավորություն է տալիս ձևավորել և ներբեռնել կատարված գործառնությունների վերաբերյալ հաշվետվություններ:Ներդրողը անձնական բաժնի Հաշվետվություններ բաժնում հնարավորություն ունի ձևավորել և արտահանել հաշվետվություններ՝ կատարած գործարքների վերաբերյալ:
Ներդրողին հասանելի են հետևյալ հաշվետվությունները

- ՏԵՂԵԿԱՆՔ
- ՔԱՂՎԱԾՔ
- ՉՀԱՇՎԱՆՑՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

Անձնական էջ

Ներդրողը, Ակտիվ կարգավիճակով, մուտք գործելիս անձնական էջ, հնարավորություն ունի խմբագրելու անձնական տվյալները: Անձնական տվյալների փոփոխության դեպքում,կախված տվյալից, ձևավորվում է Փոփոխությունների հայտ,որը պետք է հաստատվի ադմինիստրատորի կողմից և մինչ հայտի հաստատումը ներդրողի հայտի կարգավիճակը դառնում է Պասիվ:

Կատարեք ապահով ներդրում և ստացեք կայուն եկամուտ!